Արձանագրություն N 3
ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

15 մարտի 2019թ
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Սարգիս Ստեփանյան
Հանձնաժողովի անդամ՝ Աշոտ Քթոյան (գնահատող)
Էրիկ Համբարձումյան(գնահատող
Հանձնաժողովի քարտուղար՝ Սևակ Պետրոսյան

1. <Քլին Ֆոամ> ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժելու մասին

(Սարգիս Ստեփանյան)

*1.1* **13.03.2019թ.**-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացությամբ **<Քլին Ֆոամ> ՍՊԸ**-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է **9000 /ինը հազար/ ՀՀ դրամ** ժամկետանց հարկային պարտավորություն: Ուստի, **<Քլին Ֆոամ> ՍՊԸ**-ի ներկայացրած հայտը մերժել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետը՝ **<<Քլին Ֆոամ> ՍՊԸ**-ի տվյալները, ներառյալ համապատասխան հիմքերը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, հաշվի առնելով, որ առկա են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

2. **N ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման գործընթացը շարունակելու մասին**
(Սարգիս Ստեփանյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-49-րդ կետերը՝ **ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի 8, 10, 11** չափաբաժինների համար **1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <Մեծ ծիածան> ՍՊԸ**-ին: Ծանուցել սույն արձանագրությունը **<Մեծ ծիածան> ՍՊԸ**-ին՝ **8, 10, 11** չափաբաժինների համար հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնելու հրավերով սահմանված փաստաթղթերը՝ Հավելված 6 և Հավելված 6.1:

**Սույն արձանագրությունը ծանուցել բոլոր մասնակիցներին:**

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

2.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **<Մեծ ծիածան> ՍՊԸ**-ի կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու վերջնաժամկետին հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8, 306 սենյակ հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ ____________________ Ս.Ստեփանյան

անդամներ՝ ____________________ Ա. Քթոյան

____________________ Է. Համբարձումյան

քարտուղար՝ ____________________ Ս.Պետրոսյան